ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 10.01.2024թ. հ.077 գրության՝ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցի հ.15 շենքին հարակից համայնքապատկան հողամասում առկա է տարիների վաղեմություն ունեցող ինքնակամ կառուցված ավտոտնակներ և ցանկազատված տարածքներ, որոնք չունեն որևէ իրավական կարգավիճակ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից, սեփականություն հանդիսացող տարածքներն ապօրինի տիրապետումից ազատելու նպատակով, իրականացվում են ինքնակամ կառուցված շինությունների, ավտոտնակների, ցանկապատված տարածքների ապամոնտաժման լայնածավալ աշխատանքներ և նշված հասցեն նույնպես կներառվի աշխատանքներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ